INGO

VTB

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գույքի ապահովագրությունը հիանալի միջոց է պաշտպանելու Ձեր անշարժ գույքը և կանխելու խոշոր ֆինանսական կորուստները հրդեհից, բնական աղետներից և այլ վտանգներից:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փ. 51, 53,
Տարածքներ 47, 48, 50
Հեռ.՝ (+374 10) 59 21 21
Կայք՝ www.ingoarmenia.am

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- Հրդեհ,
- Պայթյուն,
- Վնասվածք ջրից,
- Տարերային աղետներ (բացառությամբ երկրաշարժի), այդ թվում՝ փոթորիկը, մրրիկը, մրրկասյունը, ուժգին քամին, տայֆունը, կայծակի հարվածը, ջրհեղեղը, սողանքը, ստորգետնյա լեռնային վանգվածների ոչնչացումը և փլուզումը, կարուտը, հորդառատ անձրևները և առատ ձյունը, հեղեղումը, մթնոլորտային տեղումները, սելավը, ձնահյուսը, փլվածքը, քարաթափումը և բնության այլ ազդեցություն,
- Մեխանիկական վնասներ,
- Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ:

ՈՐՔԱՆ Է ԿԱՉՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից թիվ 177 արձանագրությամբ 25.06.2019թ. հաստատված «Հրդեհից և այլ վտանգներից գույքի և քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության համապարփակ կանոններ»-ում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերակնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում՝ բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:

ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Յուրաքանչյուր դեպքի համար՝ ապահովագրական գումարի 1%,

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում անհրաժեշտ է վանգահարել + (374 10) 59 21 21 հեռախոսահամարով,
- Պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան իրավասու մարմնին (գողության, կոտրանքի, թալանի կամ երրորդ անձանց կողմից գույքի կանխամտածված (միտումնավոր) ոչնչացման կամ վնաս հասցնելու դեպքում՝ Ոստիկանություն, հրդեհի դեպքում՝ ԱԻՆ և այլն),
- Ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ և տվյալ պայմաններում հասանելի միջոցներն ապահովագրության օբյեկտի հետագա վնասումը կանխելու և վնասի չափը նվազեցնելու համար,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմել ընկերության վանգերի կենտրոն հատուցման դիմում լրացնելու նպատակով և լրացված դիմումի լուսապատճենը կամ լուսանկարն
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 30 օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությունը և համապատասխան իրավասու մարմինները չեն տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,
- Ապահովագրության պայմանագրով և/կամ ապահովագրության պայմաններով նախատեսված Ձեր պարտականությունները չեն կատարվել,
- Գույքի սեփականատիրոջ/լիազորված օգտագործողի կողմից խախտվել են ապահովագրության պայմաններով սահմանված պարտավորություններից որևէ մեկը, ինչի արդյունքում հնարավոր չի եղել որոշել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ պատճառը կամ հնարավոր մեղավոր անձանց կամ վնասի չափը,
- Գույքի սեփականատիրոջ, նրա ընտանիքի անդամների կամ համատեղ տնտեսություն վարող անձանց կողմից պայթուցիկ նյութերի անօրինական պահպանման կամ պատրաստման արդյունքում,
- Ինքնաայրման, փտման կամ ապահովագրված գույքի այլ բնական հատկանիշների արդյունքում գույքի վնասվածքը կամ կորուստը (ոչնչացումը),
- Կառույցների կամ դրանց մասերի փլուզումը, որը պայմանավորված չէ ապահովագրական պատահարով, այդ թվում կառույցի ավերված կամ վթարային վիճակի պատճառով,
- Գույքի վնասը կամ կորուստը (ոչնչացումը), որը վնասված է եղել նախքան ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելը, կամ չի վերականգնվել ավելի վաղ տեղի ունեցած և ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունից,
- Եթե գույքի սեփականատերը դիտավորյալ չի իրականացրել խելամիտ և հասանելի գործողություններ՝ ապահովագրական պատահարի արդյունքում հնարավոր վնասների նվազեցման համար, և դա հանգեցրել է վնասների ավելացմանը,
- Միջուկային պայթյունի,
- Ռադիացիայի կամ ռադիացիոն վարակի,
- Պատերազմական գործողությունների, ինչպես նաև զինվորական մանևրների և այլ գործողությունների, Քաղաքացիական պատերազմի, ցանկացած տեսակի քաղաքացիական հուզումների կամ գործադուլների,
- «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից թիվ 177 արձանագրությամբ 25.06.2019թ. հաստատված «Հրդեհից և այլ վտանգներից գույքի և քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության համապարփակ կանոններ»-ով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- **Շարժական գույքին (կահույք, տեխնիկա և այլն) պատճառված վնասները չեն հատուցվում,**
- **Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:**

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: